ԲՈՒՀԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը	
Նստարանի համարը	

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Ե՞րբ է տեղի ունեցել Արածանիի ճակատամարտը.

1) Ք. ա. 67 թ.
2) Ք. ա. 66 թ.
3) Ք. ա. 69 թ.
4) Ք. ա. 68 թ.

2 Ե՞րբ է Տրդատ I–ը ալաններին վտարել Հայաստանից.

1) 72 թ.
2) 76 թ.
3) 82 թ.
4) 70 թ.

3 Ե՞րբ է կառուցվել Ս. Հռիփսիմե եկեղեցին.

1) 618 թ.
2) 615 թ.
3) 631 թ.
4) 614 թ.

4 Տաշիր–Զորագետի (Լոռի) թագավոր Դավիթ Անհողինը ե՞րբ է ապստամբել Գագիկ I–ի դեմ.

1) 990 թ.
2) 998 թ.
3) 1001 թ.
4) 1000 թ.

5 Ե՞րբ է Նադիրը Ղարաբաղի բեկլարբեկությունը բաժանել երկու մասի՝ Գանձակի խանությունից անջատելով Արցախը.

1) 1730 թ.
2) 1736 թ.
3) 1747 թ.
4) 1735 թ.

6 Ե՞րբ է հրապարակվել ՀՅԴ հռչակագիրը.

1) 1890 թ.
2) 1894 թ.
3) 1893 թ.
4) 1892 թ.

7 **Ո՞ր թվականներն են ընդգրկում երկրորդ հնգամյակի տարիները.**

1) 1928–1932 թթ.
2) 1933–1937 թթ.
3) 1935–1939 թթ.
4) 1934–1938 թթ.

8 **Հայաստանի Գերագույն խորհուրդը «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» պատմական փաստաթուղթն ընդունել է՝**

1) 1991 թ. սեպտեմբերի 21–ին
2) 1991 թ. հոկտեմբերի 16–ին
3) 1990 թ. մայիսի 20–ին
4) 1990 թ. օգոստոսի 23–ին

9 **Որքա՞ն է Արաքս գետի երկարությունը.**

1) մոտ 345 կմ
2) մոտ 400 կմ
3) մոտ 1000 կմ
4) մոտ 500 կմ

10 **Ո՞վ էր Արատտայի հովանավոր աստվածը.**

1) Արամ
2) Հայ(ա)
3) Արամազդ
4) Հայկ

11 **Ո՞ր քաղաքի մոտ է հիմնվել Նոր Ջուղա բնակավայրը.**

1) Արդեբիլ
2) Թեհրան
3) Սպահան
4) Թավրիզ

12 **Ո՞ւմ նախագծով է կառուցվել Անիի Մայր տաճարը.**

1) Մանվելի
2) Տրդատի
3) Պողոսի
4) Մոմիկի

13 **Ո՞ր գավառը չէր մտնում ռուս–թուրքական 1877–1878 թթ. պատերազմից հետո ձևավորված Կարսի մարզի մեջ.**

1) Ալաշկերտ
2) Կաղզվան
3) Օլթի
4) Կարս

14 **Ո՞վ է գլխավորել Բաքվի հայերի ինքնապաշտպանությունը հայ–թաթարական ընդհարումների ժամանակ.**

1) Փարամազը
2) Արմեն Գարոն
3) Վարդանը
4) Նիկոլ Դումանը

15 **1921 թ. քանի՞ տոկոս էին կազմում հայերը Լեռնային Ղարաբաղի բնակչության մեջ.**

1) 85
2) 80
3) 95
4) 97

16 **Միջազգային ո՞ր կազմակերպությանն է անդամակցել ՀՀ–ն 1991 թ. դեկտեմբերի 21-ին.**

1) ԱՊՀ
2) Եվրամիություն
3) ՄԱԿ
4) Եվրախորհուրդ

17 **Պատմական ո՞ր փաստաթղթից է մեջբերված հատվածը.**
«Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան–բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն».

1) ՀՀ Սահմանադրություն
2) Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտ
3) Սևրի պայմանագիր
4) Հայաստանի անկախության հռչակագիր

18 **Ո՞ւմ է դիմել Անի քաղաքի բնակչությունը հետևյալ կոչով.**

«Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»:

1) Սմբատ սպարապետին
2) Սարգիս Զաքարյանին
3) Աշոտ սպարապետին
4) Վահրամ Պահլավունուն

19 **Շուշիի 1992 թ. ազատագրման գործողությունը ստացել է «……» անվանումը.**

1) Հարսանյաց հանդես
2) Օղակ (Կոլցո)
3) Հարսանիք լեռներում
4) Աղեղ

20 **Հողատիրության ինչպիսի՞ ձև էր պարգևականքը.**

1) ժառանգական մասնավոր հողատիրություն
2) եկեղեցապատկան–վանքապատկան հողատիրություն
3) պայմանական հողատիրություն
4) առուվաճառքի ենթակա մասնավոր հողատիրություն

21 **Ռուս–թուրքական 1914 թ. համաձայնագիրը չիրագործվեց, որովհետև՝**

1) եվրոպական երկրները չուղարկեցին իրենց ներկայացուցիչներին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներն սկսելու համար
2) օգտվելով Առաջին աշխարհամարտն սկսելու առիթից՝ Թուրքիան չեղյալ համարեց բարենորոգումների ծրագիրը
3) քրդական համիդիե ջոկատները հարձակվեցին քրիստոնյա կառավարչի վրա և սպանեցին նրան
4) Ռուսաստանը Արևմտյան Հայաստանը բնակեցրեց կազակներով

22 **Ի՞նչ հետևանք ունեցավ Կիլիկյան Հայաստանում ունիթորների և հակաունիթորների պայքարը.**

1) Նախադրյալներ ստեղծեց առաջադիմական ուժերի հաղթանակի համար:
2) Ամրապնդեց երկրում հոգևորականության դիրքերը:
3) Ամրապնդեց թագավորական իշխանությունը:
4) Խախտեց Կիլիկիայի հասարակության միասնությունը և թուլացրեց երկիրը:

23 **Վանի թագավորության արքաների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա. Արգիշտի I
բ. Սարդուրի II
գ. Ռուսա II
դ. Մենուա
ե. Ռուսա I
զ. Սարդուրի I

1) զ, դ, ա, բ, ե, գ
2) դ, զ, ա, ե, բ, գ
3) զ, ա, դ, բ, գ, ե
4) դ, զ, բ, ա, ե, գ

24 **Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունները դասավորել ըստ դրանց անկման ժամանակագրական հաջորդականության.**

ա. Վանանդի (Կարսի) թագավորություն
բ. Տաշիր–Զորագետի կամ Լոռու թագավորություն
գ. Վասպուրականի թագավորություն
դ. Սյունիքի թագավորություն

1) գ, ա, դ, բ
2) գ, ա, բ, դ
3) ա, գ, դ, բ
4) ա, գ, բ, դ

25 **Հայկական լեռնաշխարհի լեռնագագաթները համապատասխանեցնել իրենց բարձրություններին.**

1. Արագած
2. Սիս
3. Սիփան
4. Կապուտջուղ

ա. 4434 մ
բ. 3906 մ
գ. 5165 մ
դ. 4096 մ
ե. 3925 մ

1) 1–ե, 2–գ, 3–ա, 4–դ
2) 1–դ, 2–ե, 3–գ, 4–բ
3) 1–դ, 2–բ, 3–ա, 4–ե
4) 1–դ, 2–ե, 3–ա, 4–բ

26 **Առաջին աշխարհամարտի տարիներին ձևավորված հայ կամավորական ջոկատների հիմնադրման վայրերը համապատասխանեցնել ջոկատներին.**

1. I ջոկատ
2. II ջոկատ
3. III ջոկատ
4. IV ջոկատ

ա. Կաղզվան
բ. Սարիղամիշ
գ. Վան
դ. Իգդիր
ե. Սալմաստ

1) 1–ե, 2–բ, 3–ա, 4–գ
2) 1–բ, 2–դ, 3–ա, 4–ե
3) 1–ե, 2–դ, 3–ա, 4–բ
4) 1–ա, 2–ե, 3–դ, 4–բ

27 **Ի՞նչ տարածքներ էր զբաղեցնում հնդեվրոպական նախահայրենիքը.**

1) Հայկական լեռնաշխարհը, Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջանները
2) Հայկական լեռնաշխարհը, Միջագետքի արևելյան, Փոքր Ասիայի հյուսիսային, Իրանական սարահարթի հարավային շրջանները
3) Հայկական լեռնաշխարհը, Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հյուսիսարևելյան շրջանները
4) Հայկական լեռնաշխարհը, Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան, Փոքր Ասիայի արևմտյան, Միջագետքի հյուսիսային շրջանները

28 **Ե՞րբ է Հայաստանում սկսվել հելլենիզմի դարաշրջանը.**

1) Ք. ա. I դարից
2) Ք. ա. III դարից
3) Ք. ա. II դարից
4) Ք. ա. V դարից

29 **Ե՞րբ է Թորոս II–ը վերականգնել Ռուբինյան իշխանությունը.**

1) 1149 թ.
2) 1151 թ.
3) 1145 թ.
4) 1152 թ.

30 Ո՞ւմ անվան հետ է կապված հեռավորության վրա գունավոր պատկեր հաղորդելու առաջին փորձի կատարումը.

1) Հովհաննես Ադամյանի
2) Տիգրան Լևոնյանի
3) Խորեն Սինանյանի
4) Արտեմ Ալիխանյանի

31 Որքա՞ն էր հայկական բանակի մարտական ուժը 1920 թ. թուրք–հայկական պատերազմի ժամանակ.

1) 40 000
2) 15 000
3) 20 000
4) 25 000

32 Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.

«Ամեն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կա, նայում է միայն հանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար… մենակ ենք և պետք է ապավինենք միա՛յն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու համար»:

1) Մովսես Սիլիկյանը
2) Արամ Մանուկյանը
3) Ռուբեն Տեր–Մինասյանը
4) Դրոն

33 Ո՞ւմ դեմ կատարած արշավանքից էր վերադարձել հայոց արքան.

«Հայոց թագավորը վերադարձավ մեծ հաղթությամբ, շատ ավարով ու ցնծալից ուրախությամբ. նա վերադարձավ Հայաստան՝ Այրարատ գավառը՝ Վաղարշապատ քաղաքը. եկավ մեծ ուրախությամբ, բարի անունով ու շատ ավարով»:

1) Կովկասի լեռնականների
2) Պարսկաստանի
3) Հռոմեական կայսրության
4) Կապադովկիայի

34 Ռուսաստանում 1917 թ. հոկտեմբերի 25–ին ստեղծված նոր կառավարությունը կոչվել է՝

1) Ռազմահեղափոխական կոմիտե
2) Ժամանակավոր կառավարություն
3) Ժողովրդական կոմիսարների խորհուրդ
4) Սահմանադիր կոմիտե

35 **Թվարկվածներից որո՞նք են Երկրորդ աշխարհամարտից հետո սկսված հայերի զանգվածային հայրենադարձության պատճառները.**

ա. ԽՍՀՄ հեղինակության աճը
բ. սառը պատերազմի իրողությունը
գ. հայկական գաղթօջախներում Հայ դատի համար պայքարի պայմանների բացակայությունը
դ. ԽՍՀՄ ղեկավարության հայանպաստ դիրքորոշումը
ե. Թուրքիայի անդամակցելը ՆԱՏՕ–ին

1) ա, դ
2) բ, դ
3) բ, ե
4) ա, գ

36 **XIX դարի ռուս–պարսկական երկրորդ պատերազմի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Թավրիզի գրավումը
բ. Շուշիի պաշարման սկիզբը
գ. Երևանի բերդի գրավումը
դ. Շամքորի ճակատամարտը

1) դ, գ, ա, բ
2) բ, դ, ա, գ
3) դ, բ, ա, գ
4) բ, դ, գ, ա

37 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Մոսկվայի պայմանագրի ստորագրումից հետո թուրքական զորքերի հեռանալն Ալեքսանդրապոլից
բ. Հայհեղկոմի դեկրետը Փետրվարյան ապստամբության բոլոր մասնակիցներին համաներում շնորհելու մասին
գ. Ինքնավար Սյունիքի հռչակվելը Լեռնահայաստան
դ. Հայհեղկոմի վերակազմավորվելը ՀՍԽՀ Ժողկոմխորհի
ե. Փետրվարյան ապստամբության ժամանակ Կարմիր բանակի զորքերի կողմից Երևան մտնելը

1) ե, ա, բ, գ, դ
2) ա, ե, գ, բ, դ
3) ե, բ, ա, դ, գ
4) ե, ա, գ, դ, բ

38 **Հայ արքաների անունները համապատասխանեցնել արքայատոհմերի անվանումներին.**

1. Դավիթ Անհողին	ա. Հեթումյաններ
2. Լևոն Մեծագործ	բ. Արծրունիներ
3. Սենեքերիմ	գ. Ռուբինյաններ
4. Վարազդատ	դ. Արշակունիներ
5. Լևոն III	ե. Բագրատունիներ
	զ. Նղրեցիներ

1) 1–ե, 2–ա, 3–բ, 4–դ, 5–զ
2) 1–դ, 2–ե, 3–ա, 4–գ, 5–բ
3) 1–ե, 2–գ, 3–ա, 4–բ, 5–զ
4) 1–ե, 2–գ, 3–բ, 4–դ, 5–ա

39 **Ընտրել ճիշտ բացատրությունները.**

1) «Արքունի հացատար»–ը Վանի թագավորության արձանագրություններում հիշատակված մի շարք գործակալությունների անվանումներից է:
2) Արարատյան կամ Վանի համահայկական պետության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «գործակալներ»:
3) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:
4) «Սահմանապահ կուսակալ»–ը Վանի թագավորության արձանագրություններում հիշատակված մի շարք գործակալությունների անվանումներից է:
5) Վանի թագավորության առանձին նահանգների կառավարիչները կոչվում էին սատրապներ:

40 **Թվարկվածներից որո՞նք Բագրատունիների գլխավորությամբ Հայաստանի անկախության վերականգնման համար արտաքին նախադրյալ չեն հանդիսացել.**

1) Արաբական խալիֆայության ծանր դրությունից օգտվում էր նրա դարավոր հակառակորդ Պարսկաստանը, որն ամեն կերպ աջակցում էր խալիֆայությունից առանձնանալ ձգտող կենտրոնախույս ուժերին:
2) Գերազանցապես վարձկաններից կազմված արաբական բանակը միշտ չէ, որ ենթարկվում էր խալիֆներին և երբեմն անհնազանդություն էր ցուցաբերում:
3) Արևելքում խալիֆայությունը կործանիչ պարտություն էր կրել Ռուսիայից, և խալիֆայությունը հարկադրված էր դիմելու զիջումների քաղաքականության:
4) Արաբական խալիֆայության ներքաղաքական իրավիճակը կայուն չէր, մեծ ծավալ էին ստացել ժողովրդական ազատագրական ընդվզումները և գահակալական կռիվները:
5) Առանձին երկրների արաբ ամիրաները տեղերում բավականին ամրապնդել էին իրենց իշխանությունը և ձգտում էին անջատվելու խալիֆայությունից:

41 **Բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Վիեննայում լույս տեսած Հ. Գաթըրճյանի «Տիեզերական պատմություն» երկհատորյակը հայերենով գրված համաշխարհային պատմության առաջին ձեռնարկն էր:
2) Տիգրան Չուխաճյանը հայ օպերային արվեստի հիմնադիրն է:
3) Աղաբաբյան դպրոցը հատկապես լայն ճանաչում է ձեռք բերել Սերովբե Վիչենյանի տեսուչ եղած ժամանակ:
4) Միհրան Ղասաբյանի ռենտգենաբանությանը նվիրված աշխատություններն այսօր էլ որպես դասագիրք օգտագործվում են ԱՄՆ–ի բժշկական ինստիտուտներում:
5) Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան բեմադրվել է 1902 թ. Երևանում:

42 **Թվարկվածներից ո՞րն է խախտում պայմանագրերի տրված շարքի՝ ստորագրման ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Գյուլիստանի պայմանագրի կնքումը
2) Թուրքմենչայի պայմանագրի կնքումը
3) Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքումը
4) Մոսկվայի պայմանագրի կնքումը
5) Կարսի պայմանագրի կնքումը
6) Սևրի պայմանագրի կնքումը

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Ոսխայի ճակատամարտը
2) հայոց Արշակ I արքայի գահակալումը
3) Սասանյան արքայատոհմի հիմնումը
4) Վաղարշ II–ի և հռոմեական կայսր Սևերոսի միջև հաշտության կնքումը
5) Գառնիի ամրոցի կառուցումը

44 **Կատարել համապատասխանեցում.**

Ա. Երվանդ Քոչար
Բ. Արուս Ոսկանյան
Գ. Մինաս Ավետիսյան
Դ. Շարա Տալյան
Ե. Լևոն Քալանթարյան

1) դերասան
2) քանդակագործ
3) կոմպոզիտոր
4) ռեժիսոր
5) երգիչ
6) գեղանկարիչ

Ա	Բ	Գ	Դ	Ե

45 **Վարդանանց պատերազմին վերաբերող ստորև տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

45.1 Հռոմից օգնություն չստանալով՝ Վասակ Սյունին ծրագրել էր հաշտվել պարսից արքունիքի հետ:
45.2 Ավարայրի ճակատամարտում հայերի և պարսիկների զորքերի թիվը հավասար էր:
45.3 Հայ նախարարները Հազկերտ II–ի պահանջով Տիզբոն ժամանեցին 450 թ. ապրիլին:
45.4 Պարսից արքան իր մոտ պատանդ պահեց Աղձնիքի բդեշխ Վազգենին և Վասակ Սյունու երկու որդիներին՝ Բաբիկին ու Ատրներսեհին:
45.5 Ղևոնդ երեցը Ավարայրի ճակատամարտի նախօրեին մկրտեց մինչ այդ չմկրտված զինվորներին:
45.6 Ավարայրի ճակատամարտում Վարդան Մամիկոնյանը վերցրել էր երկրորդ գնդի հրամանատարությունը:

46 **Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Արևմտահայության կյանքը կազմակերպող օրենսդիր մարմինը, ըստ Ազգային սահմանադրության, կոչվում էր Ազգային ժողով:
բ. Օսմանյան կայսրությունում գտնվող Անտիոքի սուրբ վայրերին տիրելու համար տարբեր եկեղեցիների միջև ծագած վեճը հայտնի է «Արևելյան հարց» անունով:
գ. Ռուսաստանում 1844 թ. ստեղծված վարչական մեծ միավորը կոչվում էր Կովկասի փոխարքայություն:
դ. 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի արդյունքում միջազգային հարաբերությունների կիզակետում հայտնված հիմնախնդիրը հայտնի է Հայկական հարց անունով:
ե. Հովսեփ Արղությանի ղեկավարած մարմինը կոչվում էր Կ. Պոլսի Ազգային բյուրոյի օրենսդիր կոմիտե:
զ. Կովկասյան ճակատում գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքովի գլխավորությամբ կռվող ռուսական զորամիավորումը կոչվում էր Կովկասյան կորպուս:
է. 1844 թ. ստեղծված և Երևան, Նոր Բայազետ, Նախիջևան, Ալեքսանդրապոլ ու Օրդուբադ գավառներն ընդգրկող վարչական միավորը կոչվում էր Երևանի նահանգ:

1) գ, դ, զ
2) ա, գ, ե
3) բ, ե, է
4) բ, դ, է

47 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. ԽՍՀՄ–ում առաջնահերթ կարգով թեթև արդյունաբերական և սննդի ձեռնարկությունների ստեղծման քաղաքականությունը կոչվեց արդյունաբերացում:
բ. 1920–ական թթ. վերջերից ԽՍՀՄ գյուղատնտեսության ոլորտում իրականացված քաղաքականությունը հայտնի է կոլեկտիվացում անունով:
գ. Գյուղի կոլեկտիվացման ընթացքում իրենց աշխատանքի շնորհիվ կայուն տնտեսություն ստեղծած խավը հայտնի էր կուլակ անվանումով:
դ. 1920–ական թթ. ստեղծված գյուղացիական միացյալ տնտեսությունների ձևերից էին սովխոզները, արտելները, կոմունաները:
ե. Գյուղացիության մեծամասնությունը կազմող միջակ գյուղացուն ունեզրկման, ընտանիքով գյուղից վտարման քաղաքականությունը կոչվեց կուլակաթափություն:
զ. Ալեքսանդրապոլում 1920 թ. բոլշևիկների ստեղծած ապստամբության ղեկավար մարմինը կոչվում էր Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե (ՌՀԿ):
է. 1923 թ. նոյեմբերին Երևանում գումարված այն համաժողովը, որտեղ հնչակյանները հանդես եկան իրենց լուծարման մասին հայտարարությամբ, կոչվեց ինքնավերացման համագումար:

1) ա, գ, զ
2) բ, դ, զ
3) բ, ե, է
4) ա, գ, է

48 **Թվարկվածներից որո՞նք են Մծբինի 298 թ. պայմանագրի հետևանքներ.**

ա. Բյուզանդիան հաստատվեց Վիրքում և Պոնտոսում:
բ. Փոքր Հայքը վերադարձվեց Հայաստանին:
գ. Տրդատ III–ը վերջնականապես ճանաչվեց Մեծ Հայքի թագավոր:
դ. Տրդատ III–ը սկսեց զբաղվել երկրի հզորացմամբ և շինարարությամբ:
ե. Ներսեհը ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը:
զ. Պարսից արքա Շապուհ II–ը ճանաչեց Մեծ Հայքի անկախությունը:
է. Հայաստանը թոթափեց Աքեմենյանների գերիշխանությունը:

1) գ, դ, ե
2) ա, բ, է
3) դ, ե, զ
4) ա, գ, զ

49 **Ընտրել երեք պատճառ, որոնք նպաստեցին Հուստինիանոս I կայսեր օրոք Արևմտյան Հայաստանում հայ նախարարների իշխանության թուլացմանը.**

ա. հայերի հակահռոմեական հաճախակի ելույթները
բ. ժառանգության իրավունքի մասին հատուկ օրենքի ընդունումը
գ. հայ նախարարների միջև փոխադարձ թշնամանքը
դ. կառավարման հանձնումը բյուզանդական զինվորական պաշտոնյաներին
ե. նոր վարչական բաժանումները
զ. հաճախ կրկնվող պարսկա–բյուզանդական պատերազմները
է. Հուստինիանոսի կողմից նոր աշխարհագիր անցկացնելը

1) ա, զ, է
2) բ, դ, ե
3) ա, գ, ե
4) բ, ե, է

50 **Արտաշեսյան տիրակալների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա. Արտավազդ II
բ. Տիգրան IV և Էրատո
գ. Արտաշես II
դ. Տիգրան I
ե. Արտաշես I
զ. Արտավազդ III
է. Տիգրան II
ը. Տիգրան IV
թ. Արտավազդ I
ժ. Տիգրան III

1) ե, թ, դ, է, ա, գ, ժ, ը, զ, բ
2) թ, ե, դ, ա, է, ժ, գ, ը, բ, զ
3) ե, դ, թ, է, ա, գ, ժ, ը, բ, զ
4) թ, ե, դ, է, գ, ա, ը, զ, ժ, բ

51 **Իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Ակոռիի ճակատամարտը
բ. Խոսրով IV–ի՝ երկրորդ անգամ Մեծ Հայքի թագավոր դառնալը
գ. հայոց այբուբենի ստեղծումը
դ. Արշակունյաց թագավորության անկումը
ե. Խաղխաղի ճակատամարտը
զ. Արտաշատի ժողովը Հովսեփ Ա Վայոցձորցի կաթողիկոսի գլխավորությամբ
է. Արշակավան քաղաքի կառուցումը

1) է, բ, զ, ա, դ, գ, ե
2) է, բ, գ, դ, զ, ե, ա
3) է, գ, բ, դ, զ, ե, ա
4) բ, է, դ, զ, գ, ա, ե

52 **XVII դ. երկրորդ կեսի և XVIII դ. սկզբների իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Անգեղակոթի գաղտնի խորհրդակցությունը
բ. Մեղրիի ճակատամարտը
գ. Հալիձորի ճակատամարտը
դ. թուրքական բանակի ներխուժումն Արարատյան դաշտ
ե. Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ գաղտնի ժողովի գումարումն Էջմիածնում
զ. Պետրոս I–ի Կասպիական արշավանքի սկիզբը
է. Մխիթար սպարապետի մահը
ը. Ավան հարյուրապետի գլխավորությամբ պատվիրակության մեկնումը ռուսական բանակ՝ օգնական զորք ստանալու նպատակով
թ. Երևանի պաշտպանությունը թուրքական զորքերից
ժ. թուրքական զորքերի ներխուժումը Վարանդա գավառ

1) ա, ե, բ, զ, դ, գ, ը, թ, ժ, է
2) ե, ա, զ, ժ, թ, դ, գ, բ, է, ը
3) ա, գ, դ, բ, զ, ե, ը, թ, է, ժ
4) ե, ա, զ, դ, թ, ժ, գ, բ, ը, է

53 **Կատարել համապատասխանեցում.**

Հիմնադիր արքա	**Քաղաք**
1. Սարդուրի I	ա. Զարիշատ
2. Արգիշտի I	բ. Մծուրք
3. Արտաշես I	գ. Տուշպա
4. Շամ Երվանդական	դ. Բագարան
5. Սանատրուկ	ե. Էրեբունի
6. Երվանդ Վերջին	զ. Սամոսատ
	է. Արշամաշատ

1) 1–գ, 2–ե, 3–բ, 4–է, 5–զ, 6–դ
2) 1–գ, 2–ե, 3–ա, 4–դ, 5–բ, 6–զ
3) 1–ե, 2–գ, 3–բ, 4–զ, 5–է, 6–ա
4) 1–գ, 2–ե, 3–ա, 4–զ, 5–բ, 6–դ

54 **Ընտրել ճիշտ պնդումները.**

ա. Ք. ա. VII դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ–արևմուտքում վերականգնված Հայկազունների իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Արմե–Շուբրիա պետական կազմավորմանը:
բ. Ք. ա. 609 թ. Վանն արդեն Պարույր նահապետի իշխանության տակ էր:
գ. Տիգրան Երվանդյանին հաջորդել է նրա որդի Վրույրը:
դ. Հայերի ապստամբությունը ճնշելու համար Դարեհ I–ը ուղարկել է պարսիկ զորավար Վեհմիհրշապուհին:
ե. Ըստ Պատմահոր հաղորդման՝ Պարույր նահապետը միավորել է Սևանա լճից մինչև Տիգրիս ընկած ողջ տարածքը:
զ. Տիգրան Երվանդյանը մտերիմ հարաբերություններ ուներ պարսից արքա Կյուրոս Կրտսերի հետ:
է. Ք. ա. 580–570–ական թթ. նշանավոր դարձած Երվանդ I Սակավակյացի անունով նոր արքայատոհմը կոչվել է Երվանդական, Երվանդյան կամ Երվանդունի:

1) գ, դ, է
2) ա, զ, է
3) ա, բ, է
4) բ, դ, ե

55 **VIII դ. հակաարաբական առաջին ապստամբությանը վերաբերող ստորև տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Ապստամբությունն ընդգրկել էր Երևանը, Վանանդը, Վասպուրականը:
բ. Վարդանակերտի մոտ արաբները չկարողացան դիմադրել և սկսեցին խուճապահար անցնել Եփրատը:
գ. Ռշտունիք գավառի Ակոռի գյուղի մոտ ապստամբները Վասպուրականի Սմբատ իշխանի գլխավորությամբ ջախջախեցին թշնամուն:
դ. Արաբները հայ նախարարներին և հոգևորականներին ողջակիզեցին Դվինի եկեղեցում:
ե. Վարդանակերտի մոտ պարտված արաբները փախուստի դիմեցին, Երասխի սառույցը ջարդվեց, և նրանցից շատերը խեղդվեցին:
զ. Հայոց իշխան Սմբատ Բագրատունու 12 000–անոց այրուձին գտնվում էր Արձնի գյուղի մոտ, երբ արաբական 5000–անոց ջոկատը հասավ նրանց:
է. Վանանդ գավառում Կամսարական իշխանի հեծյալ գունդը ջախջախեց արաբների մի մեծ զորամաս:

1) ա, ե, է
2) բ, գ, դ
3) ե, զ, է
4) բ, գ, է

56 **Թվարկվածներից որո՞նք են առնչվում 1836 թ. եկեղեցական կանոնադրությանը.**

ա. Ռուսական կայսրության տարածքում ստեղծվում էր հայկական հոգևոր 8 թեմ:
բ. Հայոց եկեղեցին զբաղվելու էր միայն դպրոցի, ծեսերի և այլ հարցերով:
գ. Հայոց եկեղեցու տնօրինության տակ մնում էին բացառապես թեմական դպրոցները:
դ. Հայությանը տալիս էր հոգևոր–մշակութային որոշ ինքնավարություն:
ե. Հայոց եկեղեցու տնօրինմանն էին թողնվում միայն այն հողերը, որոնց վրա կառուցվելու էին վանքեր և եկեղեցիներ:
զ. Հայ ժողովուրդը ձեռք էր բերում կրոնական ինքնուրույն համայնքի կարգավիճակ:
է. Սահմանվում էին Հայոց եկեղեցու իրավասությունները պետական գործերում:

1) ա, գ, ե
2) բ, դ, զ
3) դ, զ, է
4) բ, գ, ե

57 **Գահակալման տարիները համապատասխանեցնել Բագրատունի արքաների անուններին.**

1. Աշոտ III	ա. 1020–1041 թթ.
2. Գագիկ II	բ. 928–953 թթ.
3. Հովհաննես–Սմբատ	գ. 990–1020 թթ.
4. Սմբատ II	դ. 914–928 թթ.
5. Աբաս	ե. 953–977 թթ.
6. Գագիկ I	զ. 1042–1045 թթ.
	է. 977–990 թթ.

1) 1–ե, 2–ա, 3–զ, 4–գ, 5–դ, 6–բ
2) 1–է, 2–զ, 3–ա, 4–ե, 5–բ, 6–դ
3) 1–բ, 2–զ, 3–ա, 4–է, 5–ե, 6–գ
4) 1–ե, 2–զ, 3–ա, 4–է, 5–բ, 6–գ

58 **Ընտրել ճիշտ պատասխանները.**
Հայաստանի քրմապետը համարվում էր նաև՝

1) պետական–հասարակական աշխատանքների վերահսկիչ
2) թագաժառանգների դաստիարակ
3) մեծ դատավոր
4) արքայի գլխավոր խորհրդական
5) զորքերի գլխավոր հրամանատարի տեղակալ
6) հոգևոր գերագույն առաջնորդ
7) թագավորական գանձարանի պատասխանատու

59 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Վրաց արքունիքում սպարապետին կոչում էին ամիրսպասալար:
2) Պատմական Արցախ աշխարհում XI դ. ձևավորված մահմեդական իշխանությունը հայտնի է Գանձակի աթաբեկություն անունով:
3) Վրաստանում թագաժառանգի խնամակալության պաշտոնը կոչվում էր մարդպետություն:
4) Կիլիկյան Հայաստանում սպարապետի անմիջական տեղակալը կոչվում էր սպասալար:
5) Կիլիկիայում ձիավարությունից, նետաձգությունից և այլ գիտելիքներից ու հմտություններից քննություն հանձնելով ստացած զինվորական աստիճանը կոչվում էր ասպետ:
6) Կիլիկիայի հայոց պետության կառավարման գլխավոր մարմինը կոչվում էր արքունիք:
7) Հայաստանում ձիավարությունից, նետաձգությունից և այլ գիտելիքներից ու հմտություններից քննություն հանձնելով ստացած զինվորական աստիճանը կոչվում էր մարաջախտ:

60 **Թվարկվածներից որո՞նք են արևմտահայերի առաջին համագումարի արդյունքներ.**

1) Արևմտահայ ազգային խորհրդի նախագահ ընտրվեց Ավետիս Ահարոնյանը, քարտուղար՝ Նիկոլ Աղբալյանը:
2) Արևմտահայ ազգային խորհրդի պատվավոր նախագահ ընտրվեց Անդրանիկը:
3) Ընտրվեց կենտրոնական ղեկավար մարմին՝ 15–հոգանոց Արևմտահայ ազգային խորհուրդ:
4) Կազմավորվեց հայկական զորք՝ ի դեմս Հայկական կորպուսի:
5) Վանի, Խնուսի և Էրզրումի մարզերում սկսեցին գործել Արևմտահայ ազգային խորհրդի տեղական կազմակերպությունները:
6) Խորհրդի անդամներ դարձան Ա. Ահարոնյանը, Ն. Աղբալյանը, Դրոն և ուրիշներ:
7) Ընտրվեց 15–հոգանոց գործադիր մարմին՝ Հայոց ազգային խորհուրդ:
8) Արևմտահայ ազգային խորհրդի նախագահ ընտրվեց Վահան Փափազյանը (Կոմս):

61 **Գտնել ճիշտ պատասխանները.**
Նէպի ձախողման և այդ քաղաքականությունից հրաժարվելու պատճառներից էին՝

1) գների ազատականացումը
2) պետության՝ տարեցտարի մեծացող միջամտությունը երկրի տնտեսական կյանքին
3) հացամթերումների բնագավառում 1927–1928 թթ. առաջացած դժվարությունները
4) ձեռնարկությունների տնտեսական ինքնուրույնության ավելացումը
5) անցումը կառավարման ժողովրդավարական եղանակին
6) ազգային հարցի լուծման անհրաժեշտությունը
7) ռազմական կոմունիզմի ժամանակների գործելակերպի վերականգնումը

62 **Ստորև թվարկված մշակութային նշանավոր գործիչներից ովքե՞ր են գիտամանկավարժական գործունեություն ծավալել Սանահինի և Հաղպատի վարդապետարաններում.**

1) Ներսես Մշեցի
2) Վարդան Արևելցի
3) Մխիթար Գոշ
4) Անանիա Նարեկացի
5) Հովհաննես Երզնկացի
6) Դավիթ Ալավկաորդի
7) Ներսես Լամբրոնացի

63 **Ընտրել ճիշտ պնդումները.**

1) Աղբյուր Սերոբը զգալի աշխատանք է տարել հայ–քրդական և հայ–ասորական դաշինք ստեղծելու ուղղությամբ:
2) Աբդուլ Համիդ II–ը Բեռլինի վեհաժողովի 61–րդ հոդվածի պահանջները կատարելով էր փորձում լուծել Հայկական հարցը:
3) Ֆիդայական շարժման հանդես գալն Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական ծանր ու օրհասական վիճակի հետևանք էր, այսինքն՝ ուներ իրական պատճառներ:
4) 1890–ական թթ. կեսերին հայդուկապետերի մեծ մասն արդեն հնչակյան էր, իսկ միավորված ջոկատները գլխավորապես գործում էին Հնչակյան կուսակցության հովանու ներքո:
5) Առաջին հայդուկները հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից նոր բռնությունների առիթ չտալու նպատակով հաճախ ներկայացել են որպես քրդեր և հանդես եկել «չելլոներ» կոչվող քրդական հակակառավարական ջոկատների կազմում:
6) Հրայր Դժոխքը հեղինակել է հայդուկային պայքարի իսկական դասագիրք՝ «Մարտական հրահանգներ» հայտնի կանոնագիրքը:
7) Արաբոն սկզբում հանդես է եկել իբրև անհատ վրիժառու և 1885 թ. «որպես քուրդ» զինված հարձակումներ գործել թուրքական հարկահավաքների վրա:

64 **Բոլշևիկների Մայիսյան ապստամբությանն առնչվող պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Որոշվեց ընդառաջել ապստամբներին և բոլշևիկներին ներգրավել կառավարության մեջ:
2) Մայիսի 5–ին հրաժարական տվեց Ա. Խատիսյանի կառավարությունը:
3) Ա. Խատիսյանի կառավարությանը փոխարինեց Ս. Վրացյանի կառավարությունը, որը որդեգրեց մեղմ քաղաքականություն:
4) Ընդունվեց օրենք արտակարգ դատարաններ կազմակերպելու մասին:
5) Հայոց եկեղեցին պաշտպանեց պետության շահերը:
6) Կառավարության միջոցառումները չպաշտպանեցին հասարակական կազմակերպությունները և քաղաքական կուսակցությունները:
7) Ապստամբության հաղթանակի համար երկրում լուրջ նախադրյալներ չկային:
8) Սահմանվեցին խստագույն պատիժներ ապստամբության մասնակիցների նկատմամբ, սակայն մահապատիժ չկիրառվեց:

65 **Առաջին աշխարհամարտի տարիների իրադարձություններից ո՞ր երկուսն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Ուրֆայի հերոսամարտը
2) Անդրկովկասյան հատուկ կոմիտեի ստեղծումը
3) Էրզրումի գրավումը ռուսական զորքի կողմից
4) Սայքս–Պիկոյի համաձայնագրի կնքումը
5) «Արևելյան լեգեոնի» ստեղծումը
6) ԱԺԴՀ–ի ստեղծումը
7) Արևմտահայերի առաջին համագումարը
8) Երզնկայում զինադադարի ստորագրումը

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Տրդատի հաղթական մենամարտը գոթերի իշխանի նկատմամբ
2) հայ Արշակունիների թագավորական իշխանության ժառանգական դառնալը
3) Երվանդակերտ դաստակերտի կառուցումը
4) Տիգրանակերտ մայրաքաղաքի հիմնադրումը
5) Հռոմում կայսերական վարչակարգի հիմնումը
6) մեզ հասած առաջին հայկական արքայական դրամների հատումը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Հայկական տպագրության հիմնադրումը
2) Սսի դառնալը Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք
3) Հին Ջուղայի 10 000 խաչքարերի ոչնչացումը
4) Հայկական տպարանի հիմնումը Նոր Ջուղայում
5) Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի հրավիրած գաղտնի խորհրդակցությունը
6) Օսմանյան պետության հիմնադրումը
7) Կասրե–Շիրինի պայմանագրի կնքումը

68 **Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակի անվանը.**

Ա. Անտոն Գարագաշյան
Բ. Ստեփանոս Օրբելյան
Գ. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան
Դ. Սերգեյ Գլինկա
Ե. Նիկողայոս Ադոնց
Զ. Ալեքսանդր Երիցյան

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	

1) «Պատմութիւն Հայոց»
2) «Քննական պատմութիւն Հայոց»
3) «Ազգապատում»
4) «Պատմութիւն նահանգին Սիսական»
5) «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»
6) «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում»
7) «Հայ ժողովրդի պատմության տեսություն»

69 **Հայ զինվորականների անունները համապատասխանեցնել նրանց կոչումներին կամ պարգևներին.**

Ա. Երկրորդ աշխարհամարտի առաջին հայ ԽՍՀՄ հերոսը
Բ. ավիացիայի մարշալ
Գ. նավատորմի ծովակալ, ԽՍՀՄ հերոս
Դ. ԽՍՀՄ կրկնակի հերոս
Ե. Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ ԽՍՀՄ հերոսը
Զ. լեգենդար հետախույզ, գեներալ–լեյտենանտ
Է. Թամանյան դիվիզիայի հրամանատար

1) Արմենակ Խանփերյանց (Սերգեյ Խուդյակով)
2) Իվան Իսակով
3) Հայկ Հովակիմյան
4) Լազր Չափչախյան
5) Կարապետ Սիմոնյան
6) Նվեր Սաֆարյան
7) Սերգեյ Բուռնազյան
8) Նելսոն Ստեփանյան

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

70.1 Հայոց ծագումնաբանության մասին բնիկ հայկական ավանդազրույցում որոշակիորեն առանձնանում է ժամանակագրական երկու շերտ՝ նախաքրիստոնեական և քրիստոնեական:

70.2 Թորգոմա տունը եղել է Եփրատի միջին ավազանում և հիշատակվել է դեռևս Ք. ա. XXV դարում:

70.3 «Արարատ» անվանումը «Ուրարտու» անվան ասորեստանյան տարբերակն է:

70.4 «Նաիրի» երկրանունն առաջին անգամ հիշատակված է Ասորեստանի Սալմանասար II թագավորի կողմից Ք. ա. X դ. առաջին կեսին:

70.5 Աստվածաշնչի համաձայն՝ բոլոր ազգերն առաջացել են Նոյ նահապետի երեք որդիներից՝ Հաբեթից, Քամից և Սեմից:

70.6 Ըստ վրացական ավանդության՝ Թորգամոսի ավագ որդի Հայոսից առաջացել են հայերը, Քարթլոսից՝ վրացիները, մյուս վեց որդիներից՝ կովկասյան այլ ժողովուրդներ: